



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**

N 136 - Ա
11 օգոստոսի 2014 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
ՇՏԱՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով
որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն ս/թ սեպտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը Թթուջուր և Գետիկ համայնքներում սողանքների առաջացման դեպքում» թեմայով:

2. Ուսումնավարժությունը նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

- 1) փ/ծ գեղապետ Գալստյան Է. - ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
- 2) ուսումնավարժության խաղարկման խումբ՝
փ/ծ փոխգեղապետ Արրահամյան Հ. - մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, խմբի պետ
փ/ծ ավագ լեյտենանտ Գորոյան Վ. - մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ
- 3) ուսումնավարժության վերլուծության խումբ՝
փ/ծ մայրր Հակոբյան Գ. - մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, բնակչության պաշտպանության բաժնի պետ, խմբի պետ
փ/ծ մայրր Մանուկյան Դ. - մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ

3. Ուսումնավարժությանը ներգրավել՝
 - 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին.
 - 2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարահանման հանձնաժողովին.
 - 3) Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը.
 - 4) Գետիկ համայնքի ղեկավար կազմին.
 - 5) Թթուջուր համայնքի ղեկավար կազմին:
4. Հաստատել՝
 - 1) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 1-ի.
 - 2) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Է. Գալստյանին՝
 - 1) ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ սեպտեմբերի 3-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը.
 - 2) ճշգրտել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու, բնակչության տարահանման, տարահանված բնակչության կենսապահովման պլաններով սահմանված համապատասխան միջոցառումները և ընդգրկվող ուժերի ու միջոցների կազմը.
 - 3) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.
 - 4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին ս/թ սեպտեմբերի 10-ին:
7. Ուսումնավարժության մասնակիցներին՝
 - 1) ուսումնասիրել ոլորտը կարգավորող իրավական ակտերը, պլանավորող փաստաթղթերը և ուսուցողական նյութերը.
 - 2) պատրաստ լինել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:
8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՊԱԿԱՍԱՐ



Ե. Գալստյան

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
 ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողները	Նշում կատարման մասին
	2	3	4	5
I. Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոոշում՝ անցկացման վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 11.08	Ուսումնավարժությա ն ղեկավար, Ղեկավարման շտաբ	
2.	Մտահղացման մշակում (սխեմա, բացատրագիր)	Մինչև 12.08	Ղեկավարման շտաբ	
3.	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 13.08	Ղեկավարման շտաբ	
4.	ՇՈՒ իրավիճակի զարգացման պլանի մշակում	Մինչև 15.08	Ղեկավարման շտաբ	
5.	ՇՈՒ ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	Մինչև 18.08	Ղեկավարման շտաբ	
6.	ՇՈՒ փաստաթղթերի ներկայացում ՀՀ ԱԻՆ ՓԾ ՕԿԿ համաձայնեցման	Մինչև 19.08	Ղեկավարման շտաբ	
7.	ՇՈՒ փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 03.09	Ղեկավարման շտաբ	
II. Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում				
8.	ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 10.09	Ուսումնավարժությա ն ղեկավար, Ղեկավարման շտաբ	
9.	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 12.09	Ղեկավարման շտաբ	
III. Ուսուցանվողների նախապատրաստում				
10.	ՇՈՒ անցկացման փաստաթղթերի ծանոթացում	Մինչև 10.09	Ղեկավարման շտաբ	
11.	ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի ուսումնասիրում	Մինչև 05.09	Ղեկավարման շտաբ	
12.	«Բնակչության պաշտպանության կազմակերպման առանձնահատկությունները սողանքների օրինակ» թեմայով սեմինար կատարումը անցկացում	10.09	Ղեկավարման շտաբ	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կ Ա Ձ Մ
 ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ
 ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Ը/Ը	Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	Միջնորդներ	
		պաշտոնը	ազգանուն, անուն
1.	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ, «ԱրմենՏել» ՓԲԸ Գավառ-Սևան ուղղության ցանցային շահագործման ղեկավար, «ՀԵՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի գլխավոր ինժեներ	Մարզային փրկարարական վարչության ՃԿԿ հրահանգիչ	Արսեն Պետրոսյան
2.	Տարահանման հանձնաժողով, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ	Մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Արսեն Առաքելյան
3.	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության պետ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,	Մարզային փրկարարական վարչության ԲՊԲ-ի գլխավոր մասնագետ	Հակոբ Հակոբյան
4.	մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ, մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Գետիկ, Թթուջուր համայնքների ղեկավարներ	Ճամբարակի ՀՓՋ հրամանատար	Ռուբեն Օհանյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԵՐ



Handwritten signature

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ